353 Իջի՛ր, Սուրբ Հոգի, մեր տաճարում,

1. Իջի՛ր, Սուրբ Հոգի, մեր տաճարում,
Ծարավ ու կարոտ Քեզ ենք սպասում,
Վառիր սրտերը Քո կրակով,
Կանչում ենք, արի՛, լցվենք Հոգով:

Սուրբ Հոգի՛, իջի՛ր, ծարավ ենք Քեզ,
Մեկ սիրտ, միաբան կանչում ենք Քեզ,
Պենտեկոստեի պես մեզ վառի՛ր,
Կրակե լեզուներ շնորհի՛ր:

2. Սուրբ Հոգի՛, իջի՛ր, Քեզնով վառվենք,
Զորություն առնենք, վկաներ լինենք,
Գնանք աշխարհին մենք քարոզենք,
Բոլոր ազգերին աշակերտենք:

3. Սուրբ Հոգի՛, լցրու մեզ պտուղով՝
Սեր, ուրախություն, խաղաղություն...
Երկայնամիտ, քաղցր, բարի դառնանք,
Հավատարիմ, հեզ, ժուժկալ մնանք:

4. Սուրբ Հոգի՛, իջի՛ր ու մեզ օրհնի՛ր,
Պարգևներ եկեղեցուդ շնորհի՛ր,
Հրաշք, նշաններ, զորություններ,
Մարգարեություն, թարգմանություններ: